ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԸՌԱՆՋ

ՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՌԱՄԼԷ

Պաղեստինի երկրաշարժէն (1927) առաջին Ս. Գէորգի տօնին առթիւ աւանդական ուխտաւորութիւնը դէպի Ռամլէի հայոց Ս. Գէորգ վանքը դադրած էր, անոր գրեթէ բոլորովին աւերեալ և եկեղեցւոյն լքուած վիճակ մ'ունենալուն պատճառաւ։

Այս տարի, Դիրշ. Տ. Սմբատ Եպս.ի նախաձեռնդրութեան հետեւանքով, ուխտաւորութիւնը նորոգուեցաւ։

Երեկոյեան ժամերգութիւն և Հսկում կատարուեցաւ Շաբ. օրը, իսկ Կիրակի՝ Տ. Սմբատ Եպս. պատարագեց և քարոզեց։

Երուսաղէմէն և Եփայէն բազմաթիւ ուխտաւորներ, ինչպէս նաև տեղւոյն ամբողջ հայութիւնը և ոչ-ատկաւ տարբերի քրիստոնեաներ լեցուցած էին եկեղեցին։

Վեց ոչխարներ մատաղ նուիրուած էին բարեպաշտ հաւատացեալներու կողմէ։

Ռամլէի վանքը անուանուած է Ս. Գէորգ, Լիդի մէջ սուրբին նշխարաց դամբարանին մերձաւորութեան պատճառաւ։

(«Սիոն», 1931, Ե. Տարի, Նոյեմբեր, Թիւ 11, էջ 352)։

Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Նոյեմբեր 26ին տեղի ունեցաւ Սրբ. Պատրիարքին մուտքն Յերուսաղէմ։

Մինչև Լիդ դիմաւորութեան դացած էին Գերշ. Տ. Տ. Մկրտիչ և Մատթէոս Եպս.ները և Աւագ Թարգման Պարգև Վարդապետը, ինչպէս և ներկայացուցիչներ՝ Հ. Բ. Ը. Միութեան, Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութեան, Հայկ. Միութեան, Զէյթունի Հայրենակց. Միութեան և Երուսաղէմի Հայ Արիներուն կողմէ։

Պաթիրի կայարանին մէջ ալ դիմաւորողներու բազմութիւնը աւելցաւ Երուսաղէմէն եկած ազգայիններով։

Երուսաղէմի կայարանն ալ լեցուցած էր ազգայիններու և օտարներու բազմութեամբ։ Բացի Տեղապահ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս.է և Կիլիկեան Աթոռի ներկայացուցիչ Տ. Պետրոս Արքեպս.է (Սարաճեան, հետագային (1940) 4 ամսուան համար միայն կաթողիկոս յանձիլիսա), հոն էին Բայր Սկեզեցիներէն բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպէս նաև Հրէից Բարեհաճութեան Փոխանորդը և օգնականը։

Թափօրը կանգ առաւ Եռաֆայի դրան մօտ։ Դաւթի բերդէն մինչև վանքի դուռը, հայերու և օտարներու անօրինակ հոծ բազմութեամբ մը լեցուած էր։ Ամբողջ Միաբանութիւնը զգեստաւորուած, Ս. Պատրիարքը առած ծանրագին շուրջառ մը և սարկաւագներ՝ թանկագին զգեստներով թափօր կազմեցին և «Որ զխորհուրդ» շարականը երգելով յառաջացան։

Մինչև Մայր Տաճարի դուռը ճամբու վրայ գտնուող բոլոր կամարները զարդարուած էին տեղւոյն երիտասարդութեան կողմէ ծաղկեայ գեղեցիկ դրասանգներով։

Վանքի դռնէն սկսեալ երգուեցաւ «Հրաշափառ», որով Սրբազանը մտաւ Մայր Տաճար և Ս. Գլխարդի մատրան մէջ աղօթեց և ուխտ ըրաւ, մինչ կ'երգուէր «Որ էն յէսուքեանն» շարականը։

Գոնակալութեան հանդիսութիւնները կատարուեցան 1 Դեկտ., Գշ. օրը։ կ. ա. ժամը 10ին, Դամասկոսի դրան մօտ եղող կառավարչատան մէջ, վսեմ. Բարձր Գամիսէրի կողմէ տեղի ունեցաւ Արքայական Հրավերատակի պաշտօնական յանձնումը Նորընտիր Պատրիարքին։ Միաբանութեան անդամներէն զատ, հոն էին երևելի ազգայիններէն Բժիշկներ՝ Վահան Փոսքալ, Վահան Գալպիեան և Նազարէթ Եաղլեան, Տիրաք՝ Ղազարոս Պօղոսեան, Խաչատուր Գրիգորեան և Լեւոն Գէորգեան։

Նոյն օրը, երեկոյեան ժամը 3ին, Մ. Եկեղեցեաց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Գահակալութեան փառաշուք հանդէսը, որուն ընթացքին Տեղապահ Մեսրոպ Սրբազան պատրիարքական ցուպը (ասա) յանձնեց Նորընտիր Պատրիարքին։

Հանդէսի աւարտին, Ս. Պատրիարքը բարձրացաւ Տաճարեղբօր Աթոռի պատուանդանին, ուր ընդունեց Միաբանութեան շնորհաւորութիւնը։ Ապա բոլորն ալ բարձրացան Պատրիարքարան, ուր շարունակուեցաւ հանդիսութեանց շարքը։

(«Սիոն», 1931, Ե. Տարի, Դեկտեմբեր, Թիւ 12, էջ 364-376)։

digitised by A.R.A.R.@